ATTALEA—PRINCEPS

ՎՍԵՎՈԼՈԴ ԳԱՐՇԻՆԻ

Մի մեծ քաղաքում մի բուսական այգի կար և այդ այգու մէջ – մի ահագին օրանժերէա, շինած ամբողջովին երկաթից և ապակիներից։ Նաստ գեղեցիկ էր նա. կանգուն, ոլորուն սիւները բռնած-պահում էին ամբողջ շինութիւնը, որոնց վրայ ամրացրած թեթև քանդակակերտ կամարները, հիւսելով միմեանց հետ երկաթի շրջանակների կատարեալ ցանցով, զարդարուած էին ապակիներով։ Մանաւանդ գեղեցիկ էր օրանժերէան, երբ արեգակը մայր էր մտնում ու լուսաւորում նրան իւր վերջին կարմիր գոյներով։ Նա այդ ժամանակ ասէք ամբողջութեամբ այրում էր. արևի շաւաղունած շողքերը խաղում և խառնւում էին միմեանց հետ, կարծէք, դա լինէր մի մեծ՝ խիստ մանր յղկած, թանկագին քարի մէջ։

Հաստ բայց թափանցիկ ապակիների միջից երևում էին բանտարկուած բոյսերը։ Զը նայած օրանժերէաի մեծութեանը—նա նրանց համար խիստ նեղ և արձակ էր։ Արմատները ակամայից հիւսւում էին միմեանց հետ ու խլում իրարից խոնաւութիւնը և սնունդը։ Ծառերի ճիւղերը խառնւում էին արմաւենիների ահագին տերևների հետ, կուացնում ու կոտրատում նրանց, և, իրանք, ըստ հերթին, դէմ ընկնելով երկաթի շրջանակներին, նոյնպէս կուանում և կոտրատւում։ Այգեպանները միշտ կոտորում էին նրանց ոստերը, կապում էին լարերով տերևները, որպէս զի նրանց չը կարողանան աճել ազատ դէպի ամեն կողմ,—բայց դա շատ քիչ էր օգնում։ Բոյսերի համար, երևում էր, հարկաւոր էր լայնարձակ տարածութիւն, հայրենի երկիր և ազատութիւն։ Նրանք տաք երկրների զաւակներ էին,

քնքոյշ, շքեղաշուք արարածներ. նրանք մոտաբերում էին իրանց հայրենիքը և սրտնեղում։ Ինչքան և թափանցիկ չէ ապակեայ ծածկոյթը, բայց նա, դարձեալ ի հարկէ, ջինջ երկինքը չէ։ Երբեմն, ձմեռն, երբ ապակիները սառչում էին,—տիրում էր սարսափելի մթութիւն օրանժերէայում։ Քամին ոռնում էր, զարնւում շրջանակներին և դողդողացնում նրանց։ Ամբողջ կամարը պատռւում էր մանր, քնքուշիկ ձիւնի կեղևով։ Բոյսերը կանգնած՝ լսում էին քամու ոռնալը և մոտաբերում մի այլ, տարբեր քամի, տափակ և խոնաւային, որը նրանց կեանք և առողջութիւն էր տուել։ Եւ նրանք ցանկանում էին կրկին զգալ այդ քամու շնչառու ոգին, ցանկանում էին, որ նա շարժէր իրանց ճիւղերը, խաղար իրանց տերևների հետ։ Բայց օրանժերէայում օդը անշարժ էր. միմիայն ժամանակից-ժամանակ ձմեռւան մրրիկն էր, որ կոտրում էր ապակին և ներս մոցնում եղեամով լիքը ցուրտ հոսանքը կամարի տակ. և այդ ժամանակ ամենուրեք, ուր մտնում էր այդ հոսանքը, տերևները գունաթափւում էին, կուչ գալիս և թառամում։

Բայց ապակիները շատ շուտ էին գցում։ Բուսաբանական այգու կառավարողը մի չափազանց գիտուն տեսուչ էր և նա ոչինչ անկարգութիւն չէր թոյլատրում օրանժերէայի մէջ, չը նայած որ իւր օրերի մեծ մասը նա գործադրում էր խոշորացոյցի վրայ իւր առանձին խուցում, որը շինւած էր այն գլխաւոր օրանժերէայի մէջ։

Բոյսերի մէջ, բոլորից բարձր և բոլորից գեղեցիկ, մի արմաւենի կար։ Խուցում նստող տեսուչը անուանում էր նրան լատինական լեզուով Attalea. բայց այդ անունը նորա իսկական անունը չէր. նրան հնարել էին բուսաբանները։ Նորա իսկական անունը բուսաբաններին յայտնի չէր և հէնց դորա համար էլ նա գրւած չէր սպիտակ տախտակի վրայ սև մուրով ու կպցրած ծառի բունին։ Մի անգամ այդ բուսաբանական այգին եկաւ մի նորեկ այն տաք երկրից, որտեղից-որ էր այդ արմաւենին և, երբ որ նա նրան տեսաւ, իսկայն ժպտաց, որովհետև արմաւենին յիշեցրեց նրան իւր ծննդավայրը։

—Աա... ասաց նա, ես ճանաչում եմ այս ծառը։ Եւ նա տուեց այդ ծառի անունը։

—Ներեցէ՛ք,—աղաղակեց իւր խուցից տեսուչը, որն այդ ժամանակ ուշադրութեամբ կտրատում էր ածելով մի ինչ-որ ճիւղ,—

դուք սխալւում էք։ Այնպիսի ծառ, ինչպէսին դուք բարեհաճեցիք անուանել—չը կայ։ Սա Attalea-Princeps-ն է [1]), Բրազիլիայից բերած։

—Ի... ի հարկէ,—ասաց բրազիլիացին,—ես կատարելապէս հաւատում եմ ձեզ, որ բուսաբանները նրան Ատտալէա են անւանում. բայց և այնպէս, նա ունի իւր իսկական անունը։

—Նորա իսկական անունը նա է, ինչ որ տալիս է գիտութիւնը—սառնութեամբ պատասխանեց բուսաբանը ու փակեց իւր խուցի դուռը, որպէս զի նրան չը խանգարեն մարդիկ, որոնք չեն հասկանում մինչև անգամ, որ նորա առաջ՝ ինչ-որ ասեց մի անգամ գիտութեան մարգը, պիտի լռել և ընդունել։

Իսկ բրազիլիացին երկար կանգնած՝ նայում էր ծառին և աւելի և աւելի ախրամտում։ Ցիշեց նա իւր հայրենիքը, հայրենիքի արեգակը և երկինքը, նորա շքեղ անտառները, նորա հրաշալի հարաւային գիշերները։ Մտաբերեց նա նոյնպէս, որ ինքն ոչ մի տեղ բաղդաւոր չի եղել, բացի իւր հայրենի երկրից,—իսկ նա ամբողջ աշխարհը պտտել էր։ Նա ձեռը կպցրեց արմաւենուն, կասես, մնաք բարև էր ասում նրան և հեռացաւ այդուց. իսկ միւս օրը նա շոգենաւով արդէն գնում էր տուն։

Իսկ արմաւենին մնաց։ Նորա համար օրերն էլ աւելի ծանրացան, թէև մինչև այդ օրը նրանք շատ էլ թեթև չէին։ Նա բոլորովին մենակ էր. ամբողջ հինգ սաժէնով նա բարձր էր բոլոր մնացած ծառերից, և այդ բոլոր մնացած ծառերը նրան չէին սիրում, նախանձում էին և գոռոզ էին համարում։ Այդ հասակը նրան միայն ցաւ էր պատճառում. բացի նրանից, որ նրանք բոլորը միասին էին, իսկ ինքը—մենակ, նաև ամենից լաւ էր յիշում իւր հայրենի արեգակը և ամենից շատ էր վշտանում նորա մասին, որովհետև ամենից աւելի մօտ էր այն բանին, որը փոխարինում էր նրան—գարշելի ապակեայ ծածկոյթին։ Նորա միջով նրան երևում էր երբեմնա-

---

[1]) «Ի՛նչպէս-որ մեզանից իւրաքանչիւրին մեր և մեր հօր անունն են տալիս—յիշում եմ, ինչպէս սրամտեց մի անգամ իւր դասախօսութեան ժամանակ մեր բոտանիկայի պրոֆեսոր Իվ. Բորոդին,—այնպէս էլ դիտնականները բուսերին և կենդանիներին երկու երկու անուն են տալիս»։

Ռան. թարգմ.

պէս մի ինչ-որ կապոյտ բան. դա երկինքն էր, թէև օտար և գունատ, բայց և այնպէս էլի երկինք։ Եւ ամեն անգամ, երբ բոյսերը սկսում էին զրուցել միմեանց հետ, Attulea-ն միշտ և միշտ լուռ էր և տխուր, և մտածում էր միայն նորա մասին, թէ ա՛խ ինչքան լաւ կը լինէր դուրս գալ ու կանգնել հէնց մինչև անգամ այդ գունատ երկնքի տակ։

—Ասացէք, խնդրեմ, մեզ շուտով պիտի ջրեն,—հարցրեց սագոտու արմաւենին, որը թացութեանը շատ էր կարօտում։ Ես, ճշմարիտ որ, պիտի այսօր չորանամ։

—Ինձ զարմացնում են ձեր խօսքերը, դրացիկս,—ասեց փորը դուրս ընկած կակտուսը։ Մի՞թէ, ճշմարիտ, քիչ է ջրի այն ահագին քանակութիւնը, որ ամեն օր ածում՝ են ձեզ վրայ։ Խնդրում եմ նայեցէք ինձ վրայ. ինձ ամեն օր շատ քիչ ջուր են տալիս,—բայց և այնպէս, ես միշտ թարմ եմ և ջրալի։

—Մենք սովոր չենք այդքան չափից-դուրս ժլատ կեանքի,—պատասխանեց սագոտու արմաւենին։ Մենք չենք կարող ածել այնպիսի չոր և անպէտք հողի վրայ, ինչպէս մի որ և է կակտուս։ Մենք չենք սովոր ապրել ինչպէս և փցէ։ Եւ բացի այդ բոլորից՝ ես այն էլ պիտի ասեմ, որ չեմ խնդրում ձեզ նկատողութիւններ անել։

Այս ասելով սագոտու արմաւենին վիրաւորուեց ու սուս կացաւ։

—Իսկ ինչ որ վերաբերում է ինձ,—մէջ մտաւ դարչենին,—ես գրեթէ բաւական եմ իմ դրութիւնից։ Ճշմարիտ է, այստեղ մի քիչ տխուր է, բայց գոնէ ես հաւաստի եմ, որ ինձ այստեղ ոչ-ոք չի կեղեքի։

—Դե՛հ, խօ՛մ ձեզ բոլորիդ էլ չեն կեղեքի—ասաց ժառանման ձարխոտը [1])։ Ի հարկէ շատերին կարող է արքայութիւն երևալ և այս բանդը նոյն թշուառ կացութիւնից յետոյ, որը նրանք կրել են ազատութեան մէջ։

Այստեղ դարչենին մոռանալով, որ ինքն ինչպէս շատ անգամ կեղեքւել է, վշտացաւ ու սկսեց վիճել։ Մի քանի բոյսեր նրա կողմն անցան, մի քանիսն—ձարխոտի, և սկսեց ջերմ յիշողութիւնը։ Եթէ նրանք կարողանային շարժուել տեղերիցը—անպատճառ կը կուէին։

---

[1]) Папоротникъ.

—Ի՞նչու էք վիճում,—ասաց Attalea-ն։ Մի՞թէ այդպիսով կարծում էք օգնած կը լինէք դուք ձեզ. զայրացմամբ և չարանալով դուք բազմապատկում էք միայն ձեր անբաղդութիւնը։ Լաւն այն է, թողէք ձեր վէճը և մտածեցէք գործի մասին։ Ականջ դրէք ինձ, աճեցէք բարձր և դէպի ամէն կողմ. տարածեցէ՛ք ոստեր, հրեցէք շրջանակներին և ապակիներին. օրանժերէան կտոր-կտոր կը դառնայ, մենք դուրս կը գանք ազատութիւն։ Եթէ միայն մի ճիւղ դէմ ընկնի ապակիին, նրան, իհարկէ, կը կտրեն. բա՛յց ի՞նչ կանեն հարիւր ուժեղ և համարձակ բուների հետ։ Հարկաւոր է միայն համերաշխ գործել և յաղթութիւնը մեր կողմը կը լինի։

Սկզբից արմաւենուն ոչ-ոք չը հակառակեց. բոլորն էլ լուել էին և չը գիտէին ի՞նչ ասէին։ Վերջապէս սագոտու արմաւենին վճռեց խօսել.

—Դրանք բոլորն էլ յիմարութիւններ են,—յայտարարեց նա։

—Յիմարութիւններ են, յիմարութիւններ,—ասացին ծառերը և սկսեցին միասին, խմբովին բացատրել Attalea-ին, որ նա սարսափելի մեծ անմտութիւն է առաջարկում։ Անիրագործելի ցնո՛րք,—գոռացին նրանք. ցնո՛րք, անհաւանականութիւն։ Աւաջինը՝ շրջանակները շատ պինդ են և մենք նրանց երբէք չենք կտրի և, երկրորդ, եթէ կտրէինք էլ, ախր որ ի՞նչ յետոյ։ Կը դան մարդիկ դանակներով և կացիններով, կը կտորեն ճիւղերը, կը շինեն շրջանակները և բոլորը կրկին կընկնի իւր առաջուայ կարգը։ Միայն նա կը լինի, որ մեզանից ամբողջ ճիւղեր կը կտրատեն...

—Դուք էք իմանում, ինչպէս կուզէք,—ասաց Attalea-ն։ Ես միայն գիտեմ հիմա, թէ ինչ կանեմ։ Ես ձեզ այլ ևս չեմ խօսացնի. ապրեցէք, ինչպէս ուզում էք. մրռմրռացէք միմեանց վրայ, կուռեցէք ջրի համար և մնացէք յաւիտեան այդ ապակեայ կալապակի տակ։ Ես մենակ էլ կը ճարեմ իմ ճանապարհս։ Ես ուզում եմ տեսնել երկինքը և արեգակը ոչ այս վանդակների և ապակիների միջոցով,—և ես կը տեսնեմ։

Եւ արմաւենին խրոխտութեամբ նայեց իւր բարձր կանաչ գագաթից իւր ընկերների վրայ, որոնք կանգնած էին նրա ստորոտում և կազմում էին ամբողջ անտառ։ Նրանցից ոչ-ոք չը համարձակուեց այլ ևս ոչինչ ասել, միայն սագոտու արմաւենին կամացուկ նկատեց իւր հարևան ցիկադային.

—Լա՛ւ, կը տեսնենք. կը տեսնենք ինչպէս կը կարեն քո գլուխը, որպէսզի դու շատ չը մեծամտես, խրո՛խտ։

Միւսներն թէև լռել էին, բայց այնու ամենայնիւ էլի բարկանում էին Attalea-ի վրայ նորա խրոխտ խօսքերից։ Միայն փոքրիկ խոտն էր, որ չէր բարկանում նորա վրայ և վիրաւորւում նորա խօսքերից։ Դա ամենաթշուառ և կարելի է ասել արհամարական խոտն էր օրանժերէայի բոլոր բոյսերի մէջ. փխրուն, դալկացած, սողուն, թարշամած և հաստլիկ տերևներով։ Նորա մէջ նշանաւոր ոչինչ չը կար և գործ էր ածւում օրանժերէայում լոկ մերկ գետինը ծածկելու համար։ Նա փաթաթւել էր մեծ արմաւենու ստորոտով, ականջ էր դնում նրան և նրան թւում էր, թէ Attalea-ն արդար է։ Նրան յայտնի չէր հարաւային բնութիւնը, բայց նա այնպէս սիրում էր օդը և ազատութիւնը։ Օրանժերէան նորա համար նոյնպէս բանդ էր։ «Եթէ ես, չնչին թարշամած խոտիկս, այսպէս տանջւում եմ առանց իմ մոխրագոյն երկնքի, առանց իմ գունատ արեգակի և ցուրտ անձրևի, հապա ի՞նչ պիտի կրէ բանտարկութեան մէջ այդ գեղեցիկ և խրոխտ ծառը»։

Այսպէս մտածում էր նա, քնքշութեամբ փաթաթւում արմաւենու շուրջը և գգւում նորան։ «Ա՛խր, ի՞նչու ես մեծ ծառ չեմ։ Ես կը լսէի նորա խորհրդին, մենք միասին կաճէինք և միասին դուրս կը գայինք ազատութիւն։ Այն ժամանակ միւսներն էլ կը տեսնէին, որ Attalea-ն արդար է։

Բայց նա մեծ ծառ չէր, այլ միայն և եթ փոքրիկ և թարշամած խոտիկ։ Նա դեռ ևս կարող էր փաթաթւել Attalea-ի բունով, շշնջալ նրան իւր սէրն և ցանկալ նրան աջողութիւն նորա ձնոնարկութիւնների մէջ։

—Ի հարկէ, մեզ մօտ երբէք այնպէս տաք չէ, երկինքը այնպէս պարզ և անձրևները այնքան ճոխ չեն, ինչպէս ձեր կողմերում, բայց և այնպէս, մեզ մօտ էլ կան և երկինք, և արեգակ, և հողմ։ Մեզ մօտ չը կան այնպիսի շքեղ բոյսեր, ինչպէս դուք և ձեր ընկերներդ էք, այդպիսի ահագին տերևներով և սքանչելի ծաղիկներով, բայց, այնու ամենայնիւ, մեզ մօտ էլ են բանում շատ լաւ ծառեր՝ եղևին, սոճի, թխտենի։ Ես մի փոքրիկ խոտ եմ և երբէք չեմ հասնի ազատութեան, բայց, ախր, դուք այդչափ մեծ և հուժկու

էք։ Ձեր բունը ամուր է և ձեզ քիչ է մնացել հասնելու ապակեայ ծածկոյթին։ Դուք կը փշրէք նրան և դուրս կը դաք աստուածային աշխարհը։ Այն ժամանակը դուք կը պատմէք ինձ, արդեօ՞ք այնտեղ բոլորն էլ այժմ նոյնքան գեղեցիկ են, ինչպէս որ էին։ Ես կը բաւականանամ և դրանով։

—Ա՛խր ի՛նչու., փոքրիկ խոտ, դու չես ուզում դուրս գալ ինձ հետ միասին։ Իմ բունը հաստ է և պինդ. յենուիր նորա վրայ և սողիր նրանով։ Քեզ տանելն ինձ համար ոչինչ չարժէ։

—Է՛հ, չէ՛.—ե՛ս ուր. նայեցէ՛ք, ի՛նչպէս թարշամած և տկար եմ ես. ես չեմ կարողանում բարձրացնել իմ մի ճիւղս անգամ։ Չէ՛, ես ձեզ ընկեր չեմ։ Աճեցէ՛ք, բաղդաւոր եղէ՛ք։ Միայն, խնդրում եմ, երբ դուրս եկաք ազատութիւն, մտաբերեցէ՛ք երբեմն-պէս ձեր փոքրիկ բարեկամին։

Այդ ժամանակ արմաւենին սկսեց աւելի և աւելի մեծանալ։ Օրանժերէաի այցելուները սկզբում զարմանում էին նորա ահագին հասակով, իսկ նա ամսից-ամիս աւելի և աւելի էր բարձրանում։ Բուսաբանական այգու տեսուչը այդպիսի սրընթաց աճումը վերագրում էր իւր լաւ հոգատարութեանը և հպարտանում էր իւր գիտութիւնով, որով նա շինել էր ջերմասենեակը և առաջ էր տանում իւր գործը։

—Այո՛, նայեցէք Attalea-princeps-ին,—ասում էր նա։ Այսպիսի գեղահասակ օրինակներ Բրազիլիայումն անգամ շատ սակաւ են պատահում։ Մենք գործ դրինք մեր բոլոր հմտութիւնը, որպէս զի բոյսերը ջերմասենեակում աճեն նոյնպէս ազատ, ինչպէս և ազատութեան մէջ, և, ինձ թւում է, թէ մենք հասել ենք այդ կողմից արդէն նշանաւոր առաջադիմութեան։

Այս ասելով, նա ինքնաբաւականութեամբ մի քանի անգամ խփեց իւր ձեռնափայտով արմաւենուն և հարուածները զանգակաձայն թնդացին ջերմասենեակի մէջ։

Արմաւենու տերևները սարսռեցին այդ հարուածներից։ Աւա՛ղ, եթէ նա իմանար հաւաչելը, զայրոյթի ինչպիսի գոռոց պիտի լսէր տեսուչը։

—Նա երևակայում է, իբր թէ ես բանում եմ նորա բաւականութեան համար,—մտածեց Attalea-ն։ Թո՛ղ երևակայէ։

Եւ նա սկսեց աճել, գործադրելով իւր բոլոր հիւթերը միակ ձգելու վրայ, զրկելով նրանցից իւր արմատները և տերևները։ Սրբեմն նրան թւում էր, որ կամարից հեռաւորութիւնը չի փոքրանում։ Այդ ժամանակ նա լարում էր իւր բոլոր ոյժերը։ Երջանակները աւելի և աւելի մօտենում էին նրան և ահա՛, վերջապէս, երիտասարդ տերևը կպչում է սառած ապակիին և երկաթին։

—Նայեցէ՛ք, նայեցէ՛ք,—ասացին բոյսերը. տեսէ՛ք ի՞նչտեղ է գնացել։ Զը լինի թէ վճռի։

—Ինչ անենք, որ աճել է։ Ի՞նչ մի չը տեսնուած բան է։ Ահա՛, եթէ նա կարողանար հաստանալ ինձպէս,—դա դեռ ևս հասկանալի կը լինէր,—ասաց հաստոլիկ տակառաձև բունով ցիկադան։ Ա՛խր ո՞ւր է մեկնում։ Բոլորն մի է. ոչինչ չի կարողանալու անել։ Երջանակները ամուր են և ապակիները հաստ։

Մի ամիս ևս անցաւ։ Attalea-ն բարձրանում էր։ Վերջապէս, նա ահա պինդ սեղմեց շրջանակներին։ Բանելու այլ ևս տեղ չը կար։ Այդ ժամանակ բունը սկսեց ծռուել. սաղարթախիտ գագաթը ճիպլեց. շրջանակների ցուրտ փայտերը հպուեցան ջահիլ քնքոյշ տերևներին, կոտրտեցին և այլանդակեցին նրանց, բայց ծառը յամառ էր, չէր խնայում տերևներին և չը նայելով ոչնչի, ճնշում էր վանդակներին, և, ահա՛, վանդակները սկսել էին անձնատուր լինել, թէև շինուած էին ամենաամուր երկաթից։

Փոքրիկ խոտը հեռուում էր այդ մաքառման և սրտաճմլուում էր ալեկոծութիւնից։

—Ասացէ՛ք ի՞նձ, միթէ ձեզ ցաւ չէ տալիս։ Եթէ շրջանակները այդքան ամուր են, լա՛ւ չէր լինի եթէ կենայիք,—հարցրեց նա արմաւենուց։

—Ցաւ չէ՞ տալիս։ Ի՞նչ կը նշանակէ ցաւ տալ, երբ ես ուզում եմ դուրս գալ աղատութիւն։ Մի՞թէ դու չէիր, որ խրախուսում էիր ինձ,—նկատեց արմաւենին։

—Այո՛, ես խրախուսում էի, բայց չը գիտէք որ դա այդպէս դժուար է։ Խեղճս էք գալիս։ Դուք ա՛յդպէս չարչարուում էք։

—Լռի՛ր, թշուա՛ռ բոյս։ Ինձ մի՛ խնայիլ։ Ես կը մեռնեմ, կամ կազատուեմ։

Եւ հէնց այդ րոպէին լսեց մի սուր, զանդակաձայն ճռռոց։

կոտրեց երկաթի հաստ շերտը։ Թափեցին և զօղանջեցին ապակիի կտորտանքները։ Նրանցից մէկը կպաւ տեսչի գլուակին, որն այդ բոպէին դուրս էր գալիս օրանժերէայից։

—Սա՛ ինչ է,—հեծկլտաց նա, վեր թռչելով և տեսնելով օդի մէջ թռչող ապակիի կտորները։ Նա դուրս վազեց նորա օրանժերէայից և նայեց ծածկոյթին։ Ապակեայ կամարի միջով խրոխտութեամբ ցցուած էր արմաւենու ձգուած կանաչ գագաթը։

—Միմիայն, – մտածեց արմաւենին ինքն-իրան։ Եւ միթէ սա է բոլորը, ինչի համար չարչարուել և տառապել եմ այսքան ժամանակ։ Եւ միթէ միայն սրան հասնելն էր ինձ այրող փափագը։

Խորին աշուն էր, երբ Attalea-ն դուրս ցցուած կանգնած էր փշրուած ծածկոյթի միջով։ Մաղում էր թեթև ձիւնախառն անձրևը. քամին քշում էր ցած ամպերի մոխրագոյն գահակները։ Նրան թւում էր, որ նրանք գրկում են իրան։ Ծառերը արդէն մերկացել էին և մի-մի այլանդակ մեռեալներ դարձել. միմիայն սօճիի և մայրերի վրայ էին մնացել մութ կանաչագոյն ասղնատերևները։ Ծառերը դառնալից նայում էին արմաւենուն։ «Կը սառչես,—կարծես ասում էին նրան,—դու չը գիտես թէ ինչ բան է սառնամանիքը։ Դու չես կարող դիմանալ. ի՞նչու դուրս եկար քո ջերմասենեակից։

Եւ Attalea-ն իմացաւ, որ նրա համար ամէն բան վերջացած է։ Նա սառչում էր։ Կրկին վերադարնա՞լ ծածկոյթի տակ։ Բայց նա այլ ևս անկարող է այդ անել։ Նա պիտի կանգնէր ցրտահար հողմում, զգար նորա խստութիւնները, ձիւնի սրակտուր շփումները, նայէր կեղտոտ երկնքին, աղքատ բնութեանը, բուսաբանական այգու եռևի աղբոտ սրահին, մեծ տաղտկալից քաղաքին, որը նշմարւում էր քշաթղպի մէջ, և սպասէր մինչև մարդիկ այնտեղ՝ ջերմասենեակում, չեն վճռի թէ ինչպէս վարուեն նորա հետ։

Տեսուչը հրամայեց սղոցել ծառը։ «Կարելի էր նորա վրայ մի առանձին կալպակ կառուցանել—ասաց նա,—բայց դա միթէ կարող է երկար տևել։ Նա կրկին կը բանի և բոլորը կը կոտրատի։ Բացի դորանից, էլ դա շատ թանգ կը նստի։ Սղոցել նրան»։

Թոկերով կապեցին արմաւենուն, որպէսզի նա ընկնելուց՝ չը փշրի ջերմասենեակի պատերը և ցածից, առի և արմատից, սղոցեցին նրան։ Փոքրիկ խոտը, որ փաթաթուել էր ծառի բունով, չուզեց

անջատուել իւր բարեկամից և նոյնպէս սղոցի տակ ընկաւ։ Երբոր արմաւենուն դուրս քաշեցին ջերմասենեակից, կտրած կոճղի վրայ տապալում էին սղոցով տրորած, պատառոտուած ճիւղերը և տերևները։

—Գոկել այս անպէտք բանը և դուրս գցել,—ասաց տեսուչը։ Նա արդէն դեղնել է, և սղոցն շատ է փչացրել։ Այստեղ մի ուրիշ նոր բան պէտք է տնկել։

Պարտիզպաններից մէկը բահի հմուտ մի հարուածով դուրս բերեց խոտի մի ամբողջ խտիտ։ Նա գցեց նրան զամբիւղի մէջ, դուրս տարաւ և թափեց եռևի սրահում ուղիղ մեռած արմաւենու վրայ, որն ընկած էր ցեխի մէջ և արդէն կիսաթաղուած ձիւնով։

———